


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուս 5000
ժողովուրդի կը
կերակրէ:



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1

Canada

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Շատ մը կղերական առաջնորդներ փարիսեցի
կը կոչուէին սուտեր կը
պատմէին Յիսուսի
համար:



Քանիներ տոյնիսկ փորձեցին զինք մեռցնել:
Անոնք չէին հաւատար, որ
ան իրաւ Աստուծոյ
որդին
է:



Անոր չէին ընդունէր հակառակ, որ Ան հրաշքներ
գործած էր իբր փաստ
իր ինքնուրեան:




Օրին մեկը, Յիսուս Կալիլիի ծովը անցավ: Թերեւս
հանգիստ ընելու բազմութենէն, որ իր շուրջ կը



հաւաքուէր միշտ: Սակայն
շուտով բազմութիւնը գինք
գտավ: Անոնք գիտէին,
թէ Յիսուս հրաշալի
հրաշքներ կ'ընէ: Անոնք
կ'ուզէին հետը ըլլալ:




Յիսուս առաջնորդեց աշակերտները
ամայի լեռ մը, ուր ան նստաւ եւ
սորվեցուց: Աւելի եւ ավելի մարդիկ
հաւաքուեցան: Շուտով
ճաշի ժամն էր: Ամէն
մարդ անօթի էր:




Յիսուս բազմութեան շուրջը նայեցաւ: "Ուրկէ՞
հաց պիտի քնենք, որ այս բոլորը կերակրենք", Ան
հարցուց Ֆիլիպի: Շուրջերնին նպարավաճառներ
չկային: Յիսուսին ինչի կը ծրագրէր:



"Մեծ գումարներ պետք էր, որ հոժ բազմութիւնը
կերակրէր", ըսաւ Ֆիլիպ Յիսուսի: Յիսուս եւ իր
աշակերտները այդքան դրամ չունէին:







Ուրիշ աշակերտ
մը, Էնտրիւն (Սիմոն
Փիթըրին եղբայրը)
ըսաւ Յիսուսի: "Յոս
պզտիկ տղայ ոը
կայ, որուն քով հինգ
նկանակ հաց եւ
երկու պզտիկ
ծուկ կայ...":




"... Բայց ասոնք ինչ կ'ընեն այդ բոլորին" Էնտրիլ
չէր կրնար երեւակայել, թէ այդ պզտիկ տղու մը
ճաշը ինչպէս կրնայ կերակրել այդքան հոծ
բազմութիւն, նոյնիսկ եթէ պզտիկ տղան կը
ցանկար իր ճաշը Յիսուսի տալ:




Յիսուս ըսաւ. "Թող ժողովուրդը նստի": Ժողովուրդը
նստաւ եւ թիւով մօտաւորապէս հինգ հազար: Օ՛,
հինգ հազար: Տակաւին չհաշուելով կիները եւ
պզտիկները, որ հոն էին:




Յետոյ Յիսուս առաւ հացերը եւ ձուկերը: Պզտիկ տղան կը վստահէր Յիսուսի: Ան չէր գիտեր Յիսուս ինչու իր ճաշը կ'ուզէր, կամ ինչ պիտի ընէ Յիսուս անոր հետ: Ան կրնայ մտածած ըլլալ. "Եթէ իմ ճաշս տամ ես անօթի պիտի մնամ", բայց ամէն պարագայի ան Յիսուսին տուաւ:




Յետոյ Յիսուս աղօթեց:
Շնորհակալու թիւն
տուաւ Աստուծոյ
հինգ նկանակներուն
եւ երկու ձուկերուն:
Այո: Յիսուս ըսաւ.
"Շնորհակալ եմ
քեզի Աստուած"
եւ անկէ խնդրեց,
որ օրհնէ ճաշը:




Աղօթել էտք, Յիսուս
կտրեց հացերը եւ ձուկերը
եւ իր աշակերտներուն
տուլաւ, որպէսզի
բազմութեան բաժնեն:
Հոն էր, որ ժողովուրդը
տեսաւ Յիսուսի գործած
հրաշքը: Ամէն անձ
կերաւ ուզածին չափ
եւ տակաւին ահագին
ձուկ եւ հաց մնաց
ուտելու:



Ամենքը ուտելեն ետք, տակաւին շատ ձուկ եւ հաց
աւելցաւ: "Չաւաքեցէք մնացածները, որպէսզի բան
մը չկորսուի", ըսաւ Յիսուս իր աշակերտներուն:
Անոնք տասներկու կողով լեցուցին հինգ հացի
կտորներէն, որ մնացեր էին եւ գետին ինկեր էին
ուտելու ատեն:



Այդ օրը, Յիսուս անելի քան 5000 մարդ
կերակրեց պզտիկ տղու մը ճաշով:
Ուրիշ անգամ անելի քան 4000 մարդ
եօթը նկանակով եւ քիչ մը
ծուկով կերակրեց:



Երբ պարզ մարդիկ տեսան այս նշանները,
չբարկացան ինչպես բարիսեցիները:
Փոխարենը անոնք ըսին. "Այս իրավ
մարգարեն է, որ աշխարք պիտի
գար": Անոնք գիտեին, որ
Յիսուս ինքն է փրկիչը,
որուն գալուստը
խոստացուած
էր Աստուծոյ
սուրբ
խօսքով:



Յիսուս 5000 ժողովուրդ կը կերակրէ:

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:


Կը գտնուի հետեւեալին մէջ

Յովհաննու 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"

Սաղմոս 119:130





51

60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի ղրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

